

УДК 59.002

Կենդանաբանություն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԿՐԾՈՂՆԵՐԻ ՄԻՆԱՆԹՐՈՊ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ Լևոն ՊԱՊՅԱՆ

**Բանալի բառեր** – հարավային շրջաններ, էկոլոգիա, սինանտրոպիզմ, սեղոնային սինանտրոպիզմ, մանր կրծողներ, գիշատիչներ, լուսորիչ, անտառակներ, մղյուրազույն դաշտամկներ.

**Ключевые слова** – южные регионы, экология, синантропизм, сезонный синантропизм, фотоловушка, мелкие грызуны, хищники, лесные мыши, серые полевки.

**Keywords** – southern regions, ecology, synanthropism, seasonal synanthropism, trail camera, small rodents, predators, *Apodemus*, *Microtus*.

### РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЙ СИНАНТРОПНЫХ ГРЫЗУНОВ В ЮЖНЫХ РЕГИОНАХ АРМЕНИИ

**Լ. Папян**

Процесс формирования синантропизма у грызунов (*Rodentia*) в южных частях Армении недостаточно изучен. Целью данной работы является изучение их видового состава, экологии и сравнительный анализ с сородичами из северных и центральных частей страны. В нашей работе представлены материалы наблюдений за животными с помощью фотоловушек. Исследования в этой области практически отсутствуют, что в основном определяет актуальность данной работы.

### THE RESULTS OF RESEARCH OF SYNANTHROPIC RODENTS IN SOUTHERN REGIONS OF ARMENIA

**L. Papyan**

The formation of synanthropism for rodents is not studied enough in the southern parts of Armenia. The aim of this research is studying synanthropic species of rodents and their ecology and comparing it with the results from central and northern Armenia. Here are materials, which gained during the observations of animals using trail cameras. There were no enough studies in this area, which determines the relevance of this work.

Կրծողներինու սինանտրոպիզմի ձևաբորման գործընթացը հայաստանի հարավում բավարար ուսումնասիրված չէ: Սույն աշխատանքի նպատակը հայաստանի հարավային շրջաններում սինանտրոպ կրծողների, դրանց էկոլոգիայի ուսումնասիրումն ու համեմատական աճայիկ անցկացնելն է ՀՀ հյուսիսային և կենտրոնական շրջանների հետ: Մեր աշխատանքում ներկայացված են լուսորուիչների միջոցով ստացված որոշ կադրեր: Այս ոլորտում ուսումնասիրություններ գրեթե չկան, ինչով և պայմանավորված է այս հոդվածի արդիականությունը:

Կրծողները վաղուց արդեն հարմարվել են մարդուն և հաջողությամբ ապրում են նրա հետ կողքի, երբեմն նույնիսկ մեկ հարկի տակ: Ժամանակի ընթացքում նրանք շատ լավ են հարմարվել նոր պայմաններին: Բազմահարկ շենքները, օրինակ, որոնցում գործում են աղքատարներ և կան հարմարություններ կրծողների ապրելու համար, կրծողների մի մեծ քանակի համար բնակության հրաշալի վայր են հանդիսանում: Հարկ է նշել, որ սա իրենունից մարդկային բնակավայրերին է մոտենալու կրծողներով կենդանիների, այդ թվում և գիշահչների:

Այս երևոյթի ուսումնասիրման համար պետք է լուծել հետևյալ խնդիրները. պարզել սինանտրոպ կենդանիների տեսակային կազմը, նրանց տարածվածությունը հանրապետության տարածքում, ուսումնասիրների նրանց էկոլոգիան, վարքագծային և սեղոնային ակտիվության առանձնահատկությունները և գենետիկան: Մեր աշխատանքում ներկայացված են հայաստանի հարավային շրջաններում (Արարատի, Վայոց Զորի և Սյունիքի մարզեր) սինանտրոպ կրծողների էկոլոգիայի և տարածվածության ուսումնասիրությունների արդյունքները: Նաև համեմատական է անցկացվել հյուսիսային շրջաններից նախկինում ստացված արդյունքների հետ: Մեր հետազոտությունները հիմնված են դաշտային աշխատանքների ընթացքում կատարված դիտարկումների և լուսանկարահանող սարքերի, այդ թվում լուսորուիչների միջոցով ստացված կադրերի վրա: Վերջիններիս կիրառումը դաշտային աշխատանքներում հաճախակի երևոյթ է և վերջին տարիներին լայն ճանաչում է ստացել կենդանաբանների շրջանում:

**Նյութը և մեթոդները:** 2015-ից մինչև 2017թյ մայիս ամիսը կատարվել են մի շաբթ գիտարշավներ դեպքի հայաստանի հարավային մարզեր: Ուսումնասիրությունների նյութը են ծառայել լուսորուիչներով ստացված կադրերը (720 HD բարձր որակի տեսանյութեր և լուսանկարներ): Հաջողվել է ֆիբսն կաթնասունների (Mammalia) դասի երկու կարգերի ներկայացուցիչների՝ կրծողների և

գիշատիչների [1, 3] կրծողներից լուսորսիշների և լուսանկարչական սարքերի օգնությամբ ստացվել են անտառամկների (Apodemus) և մոլսրազույն դաշտամկների (Microtus). իսկ գիշատիչներից՝ կզարիների (Martes) լուսանկարներ: Լուսորսիշներիցներն էին 940NM HD մոդելը, որը համեմատաբար ավելի կոմպակտ և մատչելի է: Այն հազեցած է օրվա մույթ ժամերին նկարահանման հնարավորություն տվյալ 6 ԻԿ լուսադիոդներով, բավարար իշխողությամբ և զգայուն սենսորով, որը արձագանքում է կենդանիների շարժումներին և ֆիքսում է նրանց ներկայությունը սարքերի տեղադրման վայրերում [2, 5, 6]:

Առհասարակ, սինանթրոպների էկոլոգիան և ակտիվությունը ուսումնավիճելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում ֆիքսել և հաստատել կենդանու առկայությունը որևէ վայրում: Հենց այս նպատակով են մեր աշխատանքներում օգտագործվել 5 լուսորսիշները, որոնք տեղադրվել են նախատես ընտրված տեղերում, դրանց նկուղներում և հարակից այգիներում: Սարքերը կիմնականում աշխատել են շուրջօրյա ռեժիմով: Կրծողների փոքր չափսներից են նկուղով սարքերը տեղադրվել են գնտնին կամ կախվել են ծառերից՝ ցածր բարձրության վրա:

Այս մեջողն ունի մի շարք առավելություններ: Մենայութերը, որոնք ստացվում են անմիջականորեն բներիմուտքների և տարատեսակ շինությունների տարածքում, թույլ են տալիս նկարագրել սինանտրուակ կենդանիների վարքագծային որոշ առանձնահատկությունները: Հարկ է նշել, որ չնայած թվազյալ պարզությանը, լուսորսիշ տեղադրման ժամանակ պետք է հաշվի առնել մի շարք նրբություններ, որոնք կապված են կոնկրետ կենդանու չափերի և տեղաշարժման առանձնահատկությունների, տվյալ տեղանքում մարդու և ընտանի կենդանիների մշտական ներկայության հետ:

**Արդյունքների ամփոփում:** Դաշտային աշխատանքների, թվային սարքերից ստացված կադրերի և դրանց համակարգչային մշակման արդյունքում ստացվել են գոհազուցիչ արդյունքներ: Ստացվել են բազմաթիվ լուսանկարներ, մի քանի տեսանյութ, ինչպես նաև ֆիքսել են կենդանիների մի քանի օրինակներ՝ սինանտրոպների տեսակային կազմը ճշգրտելու նպատակով: Մոլսրազույն առնետից (RattusNorvegicus) և տնային մկնիկից (Mus Musculus) զատ նկարագրվել են անտառամկների (Apodemus) և մոլսրազույն դաշտամկների (Microtus) ներկայացուցիչներ: Դրանցից ամենամեծաքանակը, ամենատարածվածն ու ամենահաճախ հանդիպող տեսակներն են անտառային մուկը (ApodemusUralensis) և սովորական դաշտամուկը (Microtus Arvalis): Գիշատիչներից (Carnivora) բնակավայրերում հիմնականում նկատվել են քարակզարիս (Martesfoina) և արիս (Mustelainialis) [4]:

Վայոց Զորի մարզում (նկ. 1, նկ. 2) հաջողվել է նկարահանել քարակզարիս (նկ. 3, նկ 4)՝ տաճ պարսպից ներսամտնելու պահը: Նույն գիշերը տաճը նկատվել են նաև կրծողները: Արարատի մարզում (նկ. 5) սարքերը ֆիքսել են մոլսրազույն առնետի (նկ. 6) առկայությունը տեղերից մեկի նկուղում: Այս փաստը գիտական արժեք չէր ունենա, եթե՛ չիներ առնետի արտատվոր պահիվածքը: Կենդանին չափազանց լավ էր հարմարված մարդու հետ համատեղ կյանքին: Մերկողմից կատարված փորձի արդյունքները որոշակի անհանգատության արիթ են հանդիսանում: Առնետին տրվել էր նրկու տարրեր ձկան կտորներ, որոնցից մեկը թունավորված էր: Ինչպես երևում էր ստացված տեսանյութում, կենդանին սկզբից մոտենում է թունավորված խայծին, մի քանի վարկյան ուսումնասիրում է այն, ապա մոտենում է մյուս խայծին և, համոզվելով, որ այն թունավորված չէ, վերցնում է խայծը: Այունիքի մարզում ստացված տվյալները փոքրաբանակ են և համարժեք են վայոց Զորից ստացվածտվյալների հետ:



Նկ.1.2. – Տուն վայոց Զորում, որի այզում հաջողվել է ֆիքսել քարակզարիս



Նկ. 3.4. - քարակզարիս (Martes foina)` տան բակ մտնելիս



Նկ.5. – Տնամներձ այզի Արարատի մարզում Նկ. 6. – Մոխ. առնետը (Rattusnorvegicus)  
տան նկուղում

Մեր աշխատանքների ընթացքում ստացված արդյունքները զարմանալի չեն: Հայաստանի հարավային շրջաններն ավելի քիչ են բնակեցված, քան նրա կենտրոնական և հյուսիսային հատվածները: Բնությունն այստեղ առայժմ շատ չփոխվել մարդածին գործոններից, ինչի արդյունքում սինանտրուպ կրծողների և դրանց հնտանրող գիշատիչների տևակային կազմը ոչ այնքան մեծարանակ տացվեց: Մենք նաև նկանք այն եզրահանգման, որ դրանում իր ազդեցությունն ունեն նաև կլիմայական պայմանները:

Մոխրագոյն արևներն ու տնային մուկը սպասելի հրեն, ինչպես և մնացաց բոլոր շրջաններում, տարածված են ամենուր: Ընդ որում, առնետները զբաղեցնում են քաղաքների բազմահարկ շենքների աղբատարերն ու հարակից աղբամանները, իսկ մենքները հիմնականում հանդիպում են տներին կուղաներում և պահուստարաններում: Այգիներում բոլորից շատ հանդիպում են անտառային մկները (Arodemus uralensis): Քենց այս կրծողներին են ամենահաճախը հնտապնդում գիշատիչ կենդանիները: Եւս մի հնտաքրքրի երևոյթը արձանագրվեց դաշտամկների մոտ: Նրանց հիմնական մասը, ինչպես պարզվեց, սեղոնային սինանտրովներ են: Նրանք հաջողորդավամբ տարվա մեջ մի քանի անգամ փոխում են իրենց բնակության վայրերը և, օրինակ, ցորենի և այլ հացահատիկների հավաքի շրջանում բնակություն են հաստատում ամբարներում և դրանց հարող տարածքներում [7]:

Ստացված տվյալների հիման վրա կարենի է պնդել, որ մասք կաթնատունների սինանտրուպ պոպուլյացիաները հնտղիետն ավելանում են և դառնում են ավելի մեծարանակ: Դա օգնում է նրանց գոյատնել չափազանց արագ փոփոխվող շրջակա միջավայրում և հարմարվել նոր պայմաններին: Ճիշտ է, ավելի տաք, չոր և քիչ բնակեցված հարավային մարզերում այս երևոյթը դեռ այնքան վառ արտահայտված չէ, ինչքան հայաստնի հյուսիսային և կենտրոնական մարզերում:

**ԳՐԱՎՈՐ-ՁՈՒՆ**

1. Сидорчук Н.В. и др. – Опыт использования фотоловушек при изучении поведенческой экологии барсука *Meles meles*//Териофауна России и сопредельных территорий: матер. VIII съезда Териологич. об-ва. М., 2007. – с. 455.
2. Эрнандес-Бланко и др. - Опыт применения цифровых фотоловушек для идентификации Амурских тигров, оценки их активности и использования основных маршрутов перемещений животными. // В кн.: «Амурский тигр в Северо-Восточной Азии: проблемы сохранения в ХХI веке». 2010. Отв. Ред. Журавлев Ю.Н. Владивосток, Дальнаука: с. 100-103.
3. Н.В. Сидорчук, В.В. Рожнов - Дистанционные методы изучения барсуков: некоторые особенности использования фотоловушек//Дистанционные методы изучения в зоологии: матер. научн. конф. М.: Товарищество научных изданий КМК. 2011. с. 87.
4. Павлинов И. Я. 2006. Систематика современных млекопитающих. 2-е изд. — М.: Изд-во Моск. ун-та, 297 с.
5. Папян Л.Г., Гамбaryan Г.Г. - Исследование поведения и активности мелких млекопитающих методом использования фотоловушек. Ломоносов-2015.
6. Папян Л.Г. - Формирование синантропизма в некоторых северных районах Армении на примере представителей отряда хищных млекопитающих. Вестник Российско-Армянского Университета, Серия: Физико-Математические и Естественные Науки, № 2. 2015. с. 91-94.
7. Папян Л.Г., А.М. Саргсян - Исследование синантропизма у некоторых представителей млекопитающих методом использования фотоловушек. Вестник Российско-Армянского Университета, Серия: Физико-Математические и Естественные Науки, № 2. 2016. с. 94-97.

Հոդվածը տպագրության և Երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Վ. Տ. Հայրապետյանը: